



# ՍՈՒՐԲ ՉԱԿՈԲ

## Առաջնորդաւոս Մազր Շ ԿԵՂԵՑԻ

### Ծնունդը Ետք Երրորդ Կրտսեր

30 ՅՈՒՆՈՒԱՐ 2022

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցում	Էջ 2

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԴԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ (62.1-12)

Ուստի պիտի չուեմ, Սիոնի սիրոյն,  
անդադար պիտի աշխատիմ  
Երուսաղէմի համար, մինչեւ որ անոր  
արդարութիւնը ծագի լոյսի պէս եւ<sup>1</sup>  
անոր փրկութիւնը փայլատակէ ջահի  
մը պէս։ Այն ատեն հեթանոսները  
պիտի տեսնեն արդարութիւնդ, ո՞վ  
Երուսաղէմ, բոլոր թագաւորները  
պիտի տեսնեն քու փառքդ եւ քեզ  
պիտի կանչեն նոր անունով մը որ  
Տէրը ինք պիտի տայ քեզի։ Տիրոջ  
ձեռքին մէջ վայելուչ պսակ մը պիտի  
ըլլաս. արքայական թագ պիտի ըլլաս  
Աստուծոյդ ձեռքին մէջ։ Այլեւ բնաւ  
“Լքուած Կին” պիտի չկոչուիս, ո՞չ ալ  
երկիրդ “Աւերակ” պիտի անուանուի.  
այլ ես քեզ “Նախասիրածս” պիտի  
կոչեմ, իսկ երկիրդ՝ “Բնակուած Շէն”,  
որովհետեւ Տէրը պիտի հաւանի քեզի եւ  
երկիրդ բնակութեամբ պիտի խոնուի։  
Ինչպէս երիտասարդ մը եւ կոյս մը  
նոր ընտանիք կը կազմեն, այնպէս ալ

զաւակներդ քեզի հետ նոր ընտանիք  
պիտի կազմեն. եւ ինչպէս փեսան  
հարսով կ’ուրախանայ, այնպէս ալ  
Աստուածդ քեզմով պիտի ուրախանայ։  
Ո՞վ երուսաղէմ, պարիսպներուդ  
վրայ պահապաններ կարգեցի որոնք  
անդադար գիշեր-ցերեկ Տիրոջ պիտի  
աղաղակեն։ Մի՛ լոէք, ո՞վ աղօթողներ,  
հանգիստ մի՛ տաք Աստուծոյ, մինչեւ  
երուսաղէմը վերականգնէ եւ զայն երկրի  
պարծանքը դարձընէ։ Տէրը հետեւեալ  
երդումը ըրաւ, որ պիտի կատարէ իր  
փառքով, իր զօրաւոր բազուկով. «Ա՛  
բնաւ ցորենդ թշնամիներուդ պիտի  
չտամ որպէս կերակուր, օտարներու  
զաւակները պիտի չխմեն գինիդ  
որուն համար դուն վաստակեցար. այլ  
դուն պիտի հնձես ու դուն վայելես  
քու բերքդ եւ փառք տաս Տիրոջ,  
այդեկութք պիտի ընես ու դուն խմես  
գինիդ սրբարանիս սրահներուն մէջ»։  
Ուստի դուրս թող գան բնակիչներդ,  
ո՞վ երուսաղէմ, որպէսզի ճամբաները  
պատրաստեն, շաւիդները հարթեն  
եւ ճամբայ բանան վերադարձող իմ  
ժողովուրդիս, մաքրեն ճամբաները  
քարերէն եւ հեթանոսներուն տանին  
Տիրոջ նշանը. որովհետեւ ահա Տէրը իր  
ձայնը լսելի դարձուց մինչեւ աշխարհի  
ծայրերը, ըսելով. «Հսէ՛ք երուսաղէմի

բնակիչներուն.- Ահա Փրկիչդ կու գայ  
հետը բերելով իր շահած ժողովուրդը,  
անոնք՝ որ ինք փրկեց»։ Անոնք “Սուրբ  
ժողովուրդ” պիտի կոչուին, կամ “Տիրոջ  
փրկածները”, իսկ դուն, ո՞վ երուսաղէմ,  
“Յանկալի” պիտի կոչուիս, պիտի  
կոչուիս “Քաղաք՝ որ Տէրը չէքեց”։

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ՏԻՄՈԹԵՈՍԻՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ  
ՆԱՄԱԿԻՆ**  
(2.15-19)

**Ա**շխատէ որ Աստուծոյ աչքին  
ըլլաս այնպիսի մշակ մը որ իր  
գործերուն համար ամչնալիք բան մը  
չունի, որպէս մէկը՝ որ ուղիղ կերպով  
կ'ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ  
պատգամը։

Հեռո՛ւ կեցիր հաւատքի  
ճշմարտութիւնները խեղաթիւրող  
պարապ վիճաբանութիւններէ, որոնք  
հետզհետէ մարդիկը Աստուծմէ  
հեռացնելու կը ծառայեն միայն։  
Այդպիսի խօսքերու ձգած թոյնը  
քաղցկեղի պէս կը կրծէ մարդս։ Այդպիսի  
խեղաթիւրող վիճաբաններ էին Հիմենոս  
եւ Ֆիլետոս, որոնք ճշմարտութենէն  
շեղեցան եւ շատերու հաւատքը  
քանդեցին, ըսելով թէ մեռելներու  
յարութիւնը արդէն տեղի ունեցած է։  
Բայց Աստուծոյ դրած հաստատուն  
հիմը կանգուն կը մնայ։ Անոր վրայ  
գրուած է. «Տէրը կը նանչնայ անոնի  
որոնի իրն են», եւ, «Ով որ Տիրոջ կը  
պատկանի՝ թող հեռու մնայ անիրաւ  
գործերէ»։

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ  
ԸՍՏ ՅՈՎՃԱՆՆԷՍԻ  
(6.39-47)

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-  
«Զիս զրկող Հօրս կամքն է՝ որ  
չկորսնցնեմ ո՛չ իսկ մէկը բոլոր անոնցմէ  
որոնք ինծի տուաւ, այլ յարուցանեմ զայն  
վերջին օրը։ Հօրս կամքը հետեւեալն է.  
ով որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝  
յաւիտենական կեանք կ'ունենայ, եւ ես  
պիտի յարուցանեմ զայն վերջին օրը»։

Հրեաները սկսան տրտնջալ իրեն դէմ,  
որովհետեւ ըսած էր թէ «Ես եմ երկինքէն  
իջած հացը», եւ կը հարցնէին. «Այս  
մարդը Յովսէփի որդին Յիսուսը չէ՝,  
որուն հայրն ու մայրը կը ճանչնանք.  
ինչպէ՞ս ուրեմն կ'ըսէ՝ «Ես երկինքէն  
իջայ»։ Յիսուս անոնց պատասխանեց.  
«Կը բաւէ դուք ձեզի քրթմնջէք։ Ոեւէ  
մէկը չի կրնար ինծի գալ եթէ զիս  
զրկող Հայրը զայն ինծի չբերէ. եւ ես  
պիտի յարուցանեմ զայն վերջին օրը։  
Մարգարէութիւններուն մէջ գրուած է.  
“Ամէն մարդ Աստուծմէ սորված պիտի  
ըլլայ”։ Ով որ Հօրմէս կը լսէ եւ իրմէ  
կը սորվի՝ ինծի կու գայ։ Ոչ ոք Հայրը  
տեսած է, բացի անկէ որ Աստուծմէ  
է, որովհետեւ միայն անիկա տեսած է  
Հայրը։ Ու ես կ'ըսեմ ձեզի. Ով որ ինծի  
հաւատայ՝ յաւիտենական կեանքը  
կ'ընդունի»։

Հոգեհանգստեան պաշտօն  
ինդրելու համար, հաճեցէք շաբթուան  
մէջ հեռածայնել քարտուղարութեան  
514 331 5445 կայան 202: